թիւնից ստանալու իբրև պարգև մի մի արծաթեայ ժամացոյց իրանց շղթայով։

Ամսոյս 18ին կիրակի, Նորին Օծութեան կարգադրութեամբ Իջման սուրբ սեղանի առաջ, ներկայութեամբ Վեհափառ Հայրապետի և բոլոր միաբանութեան կատարուեցաւ հոգեհանդիստ ի վրկութիւն հոգւոյ հանգուցեալ Կոմս Միքայէլ Դարիէլեան Լուսու-Մելիքեանի։

Նկեղեցին լի էր բազմութեամբ պաշտօնատար անձանց և հասարակ ժողովրդեան։ Հոգեհանգստի վերջում Նորին Օծութիւն ազգու կերպով մաղթեց հանգուցելոյ մեղաց թողութիւն և հոգւոյն հանգիստ և սուրբ հոգւոյ շնորհն խնդրեց—հանգուցելոյ վշտալի մօր, ամուսնոյ և զաւակաց համար, որ համբերութեամբ և խոնարհութեամբ տանեն այդ ծանր կորստեան ու մխիթարուին Աստուծոյ ողորմութեամբ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Յ2ն Նոյեմ. Սինօդն Ս. Էջմիածնի հիմնուելով Տփխիսու Կոնսիստոր. յայտարարութեան վերայ՝ որ ի 25 Հոկտեմ. համար 3126. թոյլատրեց իշխանուհի Եկատերինէին Լօրու Մելիքեանց իւր ծախքով կառուցանել ճոճկան գիւղում եկեղեցի, ներքին գործոց Նախարարութեան կողմից հաստատած մակարդակին համաձայն։

—

Յ30ն Նոյեմ. Սինօդն Ս. Էջմիածնի հիմնուելով Ղարաբաղու առաջնորդ Գեր. Կարապետ Եպիսկոպոսի միջնորդական յայտարարութեան վերայ՝ որ ի 28 օգոստ համար 116 թոյլատրեց Դանիէլ քահանային Տէր Գրիգորեանց շարունակել իւր քահանայագործութիւնը՝ Հուշուայ՝ վերին թաղի Ս. Յովհաննէս եկեղեցում,

---